

ՄԷՑՄՈՒՄ ԱԽՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand'Rue de Pera, Taxim 65

Համարացա իսի 85Ժա էսսի 20ԲՇԷՆՊԻՀ ՎԵ
ՃՈՒՄԱ ԻՐԹԵՍԻ կրկնելի մեջր օյոնուր:

ՆԻԽՍԵՍԻ
30 ԲԱՐԱ

مجموعه اخبار
كواغلی آغا بی جادوسی نومبر ۶۵

ԱՊՐԵՆԻ ՖԻՅԱԲԼԱՐԸ. = Իսթանպուլ իշին սենյակի 60 ղ. = 6 ալըղը 35. = Թալաթ իշին սենյակի 85. = 6 ալըղը 45 ղ. տըր: = Մէմարիքի էնէպիլ իշին սենյակի 20 ֆր. տըր: = Բոսթա իւնըթի պիղէ ալիս տըր: = 15 կիւնլըք նիւսլէսի 60 ղ. տըր: = ԻԱՆԱԹ ՇԱՐԹԼԱՐԸ. = Ինճի սահիֆէնին սըրասը 5, շնճի վէ Յիւնճի սահիֆէնին սըրասը 3, վէ Կիւնճի սահիֆէնին սենյակի սըրասը 1 ղ. տըր: = Ձօք տէֆա տէրճ իսիլէճէք իւնաթ իշին ալընա ղաղա լըգ օլունուր:

Ղազէթայա միւլթէալլիք խուսուսաթ իշին ՅՈՒՀԱՐՐԷՄ ԹՕՂԱՅԵԱՆԱ միւրաճալթ լուսնա = Իսթանպուլի Պէյօղլուսա ճատտէի քէպիրտէ Ն. 65:

ՕՐՈՒՄՆ ՆՈԹԵՐ

Մեծ-Պահ. անուր կայ, բայց ինքը չկայ:

Մեծ-Պահ. է կ'ըսենք, սակայն քանի՞ հոգի մեր մէջէն պահ. կը բռնէ: Պահ. լոկ մեր նախնիքներուն յատուկ սովորութիւն մըն էր կարծես, որուն մասին իրաւացի կը գտնենք ինքզինքնին անտարբեր մնալ՝ խիղճի կատարեալ հանդարտութեամբ: Նոյն վիճակագրութիւն մը կատարուի այսօր ցուցունող թէ քանի՞ հոգի պահ. կը բռնեն և քանի՞ հոգի ո'չ, պահ. բռնողներու պղտիկ ու անշնչան դասակարգը պիտի կորսուի՝ պահ. չբռնողներու ահագին ուկիւնտին մէջ: Այս օրերս փորձի համար գացէ՛ք քննել մէկ քանի մասվաճառներու տուրքները և հաւանականաբար պիտի տեսնէք թէ Մեծ-Պահ. մէջ է որ ամենէն աւելի միւս կը ծախուի գուցէ: Ասիկա դիտմամբ չէ անշնչա, սակայն կան մարդիկ, որոնք ո'նէ ֆիզիքական տկարութենէն զերծ ու ազատ, մասնաւոր դատաստարակի հպարտութիւն մը կը գտնեն Մեծ-Պահ. մէջ ամենէն աւելի միւս ուսուցումով, կարծես ասով ուղղով պարծնելով լովանդակ աշխարհի թէ իրենք «ատանկ» բաներու կարեւորութիւն չեն տար: Միւս միտները, չեն գիտեր թէ իրենց այս լոկ աշխարհացուցական սին ու ապուշ պարծնակալութիւնը որչափ սուղի կը նստի իրենց, որովհետեւ ատկա ընելու համար, Աստուծոյ կամքերուն կը հակառակին սըրբապղծօրէն: Նորէն պահ. բռնող դասակարգը աղքատ ու խոնարհ դասակարգին է, որ աղքատեան ցուցամոլական զգացումներ չունի և կը կատարէ ինչ որ հաւատարմութեամբ կը դրոնէ իրեն կատարել: Եկեղեցին մեծագոյն արտօնութիւնը առած է այսօր տկար ատղջու թիւն ունեցողներուն՝ ունէ պահ. չբռնողներ, սակայն չէ՛ ըսած երբէք թէ կայտառ ու ամենատաղ լազմուածք ունեցողներ ալ կամաց կամաց վերցնեն պահ. սովորութիւնը: Միթէ աշխարհ մեծ զահողութիւն մըն է Եկեղեցիին իրենցմէ պահանջածը. մարդ որչափ չար կամեցողութիւն ունենալու է հակառակու համար նոյն իսկ աշխարհի պղտիկ հպատակութիւն մը ունենալ Եկեղեցիին պատուէրներուն: Միայն աղքատ մարդիկ չէ՛ որ պարտաւոր են պահ. բռնել. ամենուս պարտականութիւնն է այդ. ինչո՞ւ թերանանք ուրեմն մեր պարտականութիւններուն մէջ, մանաւանդ երբ այդ պատուէրը անողը Եկեղեցին, մեր ամենուս հայրն է, որ մեր ամենուս լոկ բարիքը ու երկանկութիւնը կ'ուզէ:

Տխուր անկքքոտ մը հոս՝ որ կը բացատրէ թէ կարգ մը մարդիկ որչափ կորսնցուցած են իրենց բարոյական դաստիարակութիւնը և որչափ ցուցամոլութեան վրայ հիմնած են իրենց հաւատալիքները: Անգամ մը, Աւագ Հինգշաբթի օրը, ճաշարանի մը մէջ կը գտնուէի: Յաճախող մը եկաւ նստաւ քովս:

— Ինչ կը հրամայէք, հարցուց խոհարարը:

— Գորիք մը:
— Ինչ... եղաւ պատասխանը բարեպաշտ խոհարարին, որ ապշահար մնացած էր:

— Գորիք մը, կրկնեց մարդը:
— Սակայն Աւագ Հինգշաբթի՝ օրով... մտղէն չունինք...
— Ուրեմն կը մեկնիմ, ըսաւ յաճախորդը:

Եւ առաւ քաղցի ճաշողներու մէջէն, կարծելով épatant effet մը ձգած ըլլալ ներկաներուն վրայ, որոնք սակայն կը գոհանային մեղքնալով ու ցաւելով տա՛ մարդուն ապուշութեանը և անբարոյութեանը վրայ:
Քանի՞ներ ա՛յ կան, որոնք դժբաղդաբար շատ կը նմանին այս խեղճ ու ցաւալար մարդուն, և պարծանք մը գտնեն հասկցանելով աշխարհի երեսին թէ իրենք պահ. չեն բռնել: Թո՛ղ փոխանակ ասով պարծնալու, լացէ՛ք ձեր վրայ, ո՛ր անպարկաշտ անկրօններ, որ կը յանդգնէք դէմ գալ Եկեղեցիին սրբազան պատուէրներուն, լացէ՛ք ձեր վրայ, որովհետեւ լալիք է ձեր բարոյականը:

Վաղուրէն իսկ կը սկսին Մեծ-Պահ. քարոզները: Ամէն ժամ իր քարոզիչը ունի, որոնք մասնաւոր եռանդով ու հոգով կը փարին իրենց քարոզչութեան նուիրական պաշտօնին, որուն կոչումն են արդէն: Կիրակի օրերը ամպրոպները պիտի գոռան և ժամուն սինները պիտի արձաւազեն Աստուծոյ խօսքերը և Յիսուսի խաղաղութիւնը: Անգամ մըն ալ այս տարի գերիվեր երկանկութիւնը պիտի ունենանք միւսիկ ընելու Յիսուսի մեծամասն ու երկնային առաքիները, որ աստուածային հրաշակներուն կոթողներն են:

Թո՛ղ բոլոր բարեպաշտները երթան Եկեղեցի՝ լսելու Աստուծոյ խօսքերուն մեկնութիւնները: Քանի ու քանի անգամներ, Մեծ-Պահ. կրկնակի օրերը տեսած եմ ժամուն նստարանները գրեթէ պարապ, մինչ քարոզիչը կը խօսի այն թանկազին նիւթերու վրայ, զորս լսել մեծագոյն երանութիւնն է: Արդ, կրկին ու կրկին կը թախանձեմ բարեպաշտներուն, որ կրկնակի օրերը չմոռնան երթալու Եկեղեցի, լսելու համար քարոզները, որոնք աշխարհի օգտակար են մարդուն հոգեկան ու բարոյական հրճուանք մը ընծայելու համար: Մարդ հոգեկան ինչ թեթեւութեամբ դուրս կ'ելլէ ժամէն, հմայիլ քարոզ մը լսելէ ետք: Աստուածային խօսքերը ինչ անուշ ազդեցութիւն մը կը գործեն մարդիկ ընդունելուն վրայ: Նոյն իսկ շատ անգամ ցաւալի կը գտնեմ թէ ինչո՞ւ քարոզները մեր մէջ լոկ Մեծ-Պահ. շարքներուն սահմանուած ըլլան: Ինչո՞ւ մեր վարդապետները ամէն կրկնակի և ամէն ժամուն մէջ հաւատարմապէս քարոզ չսօսին ժողովուրդին: Իրենց կոչումը չէ՛ միւսին այդ: Քարոզներուն համը պիտի աւանդէ այն ատեն միայն, երբ վարժունքը զանոնք լսել: Քարոզները աղուր են, սփոփարար են, գեղեցիկ են, ինչո՞ւ չըս:

տիպէնք մեր վարդապետները որ աւելի յաճախ խօսին մեզի՝ Եկեղեցիին բնութեն: Կարծեմ անոնց ուղածն ալ այս է արդէն:

Այս շաբթու, Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Հայոց Եկեղեցին՝ Եկեղեցական երգեցողութեանց մասին կարեւոր բարեշրջում մը փորձեցաւ, որուն հետաքրքրութեամբ ներկայ գտնուեցաւ և կրնամ ըսել թէ արդենք խիստ լաւ եղաւ: Տաղանդաւոր դպրապետ ու երաժիշտ Լեւոն Էֆ. Չիլին. կրկնեց, որ տառնալինք տարիէ աւելի ժամանակէ ի վեր անընդհատ կ'աշխատէր ամէն տեսակ գործողութիւններով եռաձայն պատարագը՝ մտցնել հայ Եկեղեցիներուն մէջ, վերջապէս յաջողեցաւ անցած երեքշաբթի օր՝ եռաձայն երգեցողութեան մէջ յաջող ու գլխաւոր փորձը կատարել, Պոլսոյ արուարձաններէն խումբ խումբ դիւնաճ խորր բազմութեան մը առջեւ:

— Ես կ'անքիւ մէջ աշխարհի բազմութեան չէի տեսած մեր ժամը, կը կրկնէր ժամուն ծերուկ դանաղամը՝ հիացկոտ:

Եկեղեցիին բազմ անգամ լեցուած էր և ամենուր աչքերը հետաքրքրական եռանդով մը լեցուած էին. իսկ Լեւոն Չիլինկերեան դասին մէջ՝ իր քառասունի մօտ մարդուած աշակերտներուն գլուխը, կը վարէր Դպրաց դասը, յուզուած, աչքերը լեցած, վերայալ, և անանց նոյն իսկ տեսնելու իր եսին դիզուած, կուտակուած անազխի ամբողջ, որ իրեն հետ մէկտեղ կը յուզուէր երաժշտական այս նորութեան առջեւ, որ մանրամասն ու շարգիւծեմ ձգտումներէ ու կաղապարումներէ ազատելու ճամբով մը կը բանար Հայ. Եկեղեցիին եկեղեցական երգեցողութեանց առջեւ:

Լեւոն Չիլինկերեանի՝ Հայ. Եկեղեցիին մատուցանել փորձած ծառայութիւնը երկու բառով ու խիստ հասկնալիօրէն ամփոփելու համար, ըսենք թէ ասիէ առաջ ամէն տիպացու իր ուղածին, իր հաւանութիւն ու իր քմայքին համեմատ կ'երգէր շարականները ևս, մինչդեռ ասիէ վիճով Լեւոն Չիլինկերեանի մէթոսին համաձայն՝ ամէն դպիր, ամէն եկեղեցիի մէջ, Բերա, Մազրիզիւղ, Թրապիզոն կամ Երզրում, պիտի երգէ միեւնոյն եղանակով, միեւնոյն ձևով, միեւնոյն շնչերով և միեւնոյն խաղաղութիւն: Անկանոն երաժշտութեան կանոնադրումն է զոր կ'ընէ Լեւոն Չիլինկերեան, խիստ հոմաճիւրի ու վառվառն երիտասարդ մը անձնապէս, որ երաժշտական երգեցողութեանց խօսքը ըլլալուն պէս, կ'ողբաւորէ և աչքերը կը լեցունի զգացած անհուն խանդավառութենէն:

Ժողովուրդը մեծաւ մասամբ գնահատեց և դրուատեց Չիլինկերեանի օգտուէտ ձեւանակը:

Ամեն. Տ. Օրմանեան Հայոց Պատրիարքը որ առաջները առարկեւ է քիչ մը ժամուն մէջ երգենոն դրուելուն դէմ, յայտարարելով թէ Եկեղեցական երգեցողութիւնները պէտք է լոկ մարդկային ձայնով կատարուին, վերջէն ջերմապէս գնահատեւ է Չիլինկերեանի՝ ներկայ գտնուելէն ետք

անոր առաջին փորձին և քանի մը նոր բարեկարգութիւններ ալ առաջարկել է: Արդէն, դատաւարին Եկեղեցիներու մէջ՝ Ս. Պատարագին անոն արմօնիք կը զարնուի եղբւրջաւ տեղեր, և շատեր կը յիշեն Պոլսոյ Եկեղեցիներէն մէկ քանիին մէջ՝ Ս. Պատարագին ճիշդ կատարուած ըլլալը: — Լիւն. նախները «եռաձայն» փորձեցին անցեալները. այսօր «եռաձայն» կը փորձուի, և ինչպէս կը տեսնենք, այս երգեցողութիւնները գոհացում ու ընդունելութիւն կը գտնեն ժողովուրդին կողմէ՝ իբր կանոնաւոր երաժշտութիւն, որ անանց արեւելեան հմայքն ունի կորսնցնելու, արեւմտեան կանոններով կ'երգուի: Խուստա՛յ Եկեղեցիներու մէջ ընդհանրապէս ընդունուած է քառաձայն, եռաձայն, երգենոն՝ իբր սովորական բաներ, և Խուստա՛յ մեծամասն Հայ-Կաթողիկէ երգիչը հանգուցեալ կարա-Մուրդայ, իր կազմակերպած խմբերգներով կ'երգէր Խուստա՛յ Եկեղեցիներու մէջ՝ երգենոն և կամ ուրիշ գործիքներու ընկերակցութեամբ:

Կը յուսանք թէ՛ Լիւն. անցողիկներուն և Լեւոն Չիլինկերեանի կատարած փորձերը իրենց վայել ընդունելութիւնը և ծառայութեամբ կը գտնեն միւս Եկեղեցիներուն մէջ ալ: Եթէ արուեստի մարդու մը գնահատուած մը կ'արժէ բան մը, աւելցնեմ հոս նաեւ թէ՛ Ս. Յովնան Ոսկերբանի համակրելի Դպրապետը, որ մէկ ծայրէն մինչեւ միւսը ներկայ էր Չիլինկերեանի եռաձայնին, հմայուած ու սքանչացած մեկնեցաւ, ինչպէս հաւաստեցին ինծի: Արդէն, Ս. Յ. Ոսկերբանի Եկեղեցիին մէջ ալ, ատենէ մը ի վեր, համակրելի Դպրապետը կը ջանայ կարելի եղածին չափ կանոնաւորել Եկեղեցական երգեցողութիւնները, ջանալով եռաձայնի վերածել շարականները:

Յոյն վարդապետներ ալ, որոնք առանց հրուէրի ուղանելու եկած էին, շատ գոհ մնացին: Արդէն իրենց մէջ ալ նմանօրինակ փափաք մը կայ: Աթէնքի մէջ ալ փորձ մը կատարուել է, բայց ժողովուրդը ընդգլմացել է, ինչու որ շարականները չափազանց քանքատանքու հմաներ են: Այլ կը յուսանք թէ ամէն մարդ համողութեամբ որ՝ եռաձայն, քառաձայն կամ երգենոնը Հայ. Եկեղեցիին երգեցողութեանց կը համաձայնի կատարելապէս, և լատինականացում չեն երբէք, ինչպէս կը կարծէին շատեր: — Լեւոն Չիլինկերեան՝ երգենոնի մասը զարնել տալու համար դիւնաճ էր իր սիրելի բարեկամին և մեր տաղանդաւոր երաժիշտին՝ Յարութիւն Էֆ. Սինանեանի, որ իրեն եղած խնդրանքին վրայ, հաճոյքով ընդունեց իր մասնակցութիւնը նուիրել իր բարեկամին այս կարեւոր ձեւանակին: Երգենոնը դրուած էր՝ Աւագ Որմանին ձիւտ հոգին ժողովուրդին անտեսանելի կերպով և հոն Յարութիւն Սինանեան, ինչպէս միշտ, իր վարպետութիւնը ի վեր հանեց, մեծամասն ժողովուրդի մը առջեւ, որ ընդհանուր հիացող մըն է արդէն Յարութիւն Սինանեանի տաղանդին:

— Սինանեանը կ'անցնի կոր, Սինանեանին նայեցէք, կը փափաք բանին մեջ

